ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » նոյեմբերի 2011 թվականի № 179 - Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 13 ՇԵՆՔԻ ԹԻՎ 31 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՆԱԻՐԱ ՕՍԻՊՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի հուլիսի 13-ի № 27 որոշումը և Բյուրեղավանի քաղաքային համայնքի աճուրդային հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 01-ի № 13 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող (սեփականության վկայական №2809685 տրված 2011թվականի ապրիլի 19-ին) Բյուրեղավան քաղաքի 13 շենքի թիվ 31 40,60քմ մակերեսով բնակարանն օտարել Բյուրեղավան քաղաքի 33 շենքի թիվ 19 բնակարանի բնակիչ Նաիրա Համլետի Օսիպյանին:

2. Նաիրա Օսիպյանը պարտավոր է վճարել.

1) քաղաքապետարանի 900105202197 հաշվեհամարին՝ 715000 (յոթ հարյուր տասնհինգ հազար) դրամ՝ բնակարանի գինը

2) քաղաքապետարանի 900105202064 հաշվեհամարին՝ 5000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է Նաիրա Օսիպյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2011թ. նոյեմբերի 14
ք. Բյուրեղավան